ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-063-11.07.2017-ԳԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Հոդված 1. <<Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին>> Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-264 օրենքի (այսուհետ՝ օրենք) վերնագրից և տեքստից հանել <<ազգաբնակչություն>> բառը և դրա հոլովաձևերը:

Հոդված 2. Օրենքի նախաբանի 2-րդ պարբերությունը <<բարենպաստ>> բառից հետո լրացնել <<էկոլոգիապես անվտանգ>> բառերով. իսկ <<էկոլոգիական բարձր կուլտուրա բառերը>> փոխարինել <<էկոլոգիական մշակույթ>> բառերով:

Հոդված 3. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ և 6-րդ պարբերություններում, 3-րդ հոդվածի 2-րդ մասի <<բ>> կետում և 5-րդ հոդվածի 1-ին մասում <<կուլտուրա>> բառն ու դրա հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել <<մշակույթ>> բառով ու դրա հոլովաձևերով>>:

Հոդված 4. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության <<էկոլոգիական կուլտուրայի արմատավորմանը, բնապահպանության և բնօգտագործման>> բառերը փոխարինել <<էկոլոգիական մշակույթի արմատավորմանը, բնապահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության>> բառերով, իսկ <<անձին և>> բառերը փոխարինել <<անձի>> բառով, իսկ «նրանց» բառը փոխարինել «անձի» բառով:

Հոդված 5. Օրենքի 3-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի <<բ>> կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<< բ) նպաստել էկոլոգիական դաստիարակության և մշակույթի ձևավորմանը, մարդու հասարակության ու շրջակա բնական միջավայրի փոխներգործությունների ներդաշնակեցմանը, էկոլոգիապես գրագետ անձի ձևավորմանը.>>:

Հոդված 6. Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ <<է>>, <<ը>> , <<թ>> և <<ժ>> կետերով.

<<է) էկոլոգիական կրթության և դաստիարակության բնագավառում նորարարական գիտական գործունեության խրախուսումը.

ը) էկոլոգիական կրթության և դաստիարակության բնագավառում սովորողների, մանկավարժների, ինչպես նաև պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվական միջոցների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության խրախուսումը.

թ) էկոլոգիական կրթության ընդլայնումը կայուն զարգացման այլ ոլորտների՝ տնտեսական, սոցիալական և մշակութային փոխկապակցված հիմնախնդիրների ներառմամբ.

ժ) էկոլոգիական կրթության որակի շարունակական բարելավումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:>>:

Հոդված 7. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

<<Կրթության համակարգի բոլոր օղակներում էկոլոգիական ուղղվածության առարկաների դասավանդումն իրականացվում է պետական կրթական չափորոշիչներին, ինչպես նաև կայուն զարգացման սկզբունքներին համապատասխան:

Էկոլոգիական կրթությունը հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական) մակարդակում իրականացվում է էկոլոգիական ուղղվածություն ունեցող առարկաներում (ուսումնական պարապմունքներում) ներառված թեմաների միջոցով:>>:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 2. Օրենքի նախաբանի 2-րդ պարբերությունը <<բարենպաստ>> բառից հետո լրացնել <<էկոլոգիապես անվտանգ>> բառերով. իսկ <<էկոլոգիական բարձր կուլտուրա բառերը>> փոխարինել <<էկոլոգիական *մշակույթ* ~~գրագիտություն~~ >> բառերով:

Հոդված 3 ~~**Հոդված 6**~~**.** Օրենքի 1-ին *հոդվածի 1-ին մասի* ~~հոդվածի~~ 1-ին, 3-րդ և 6-րդ պարբերություններում, 3-րդ հոդվածի 2-րդ մասի <<բ>> կետում և ~~5-րդ հոդվածի 1-ին պարբերությունում~~ *5-րդ հոդվածի 1-ին մասում* <<կուլտուրա>> բառն ու դրա հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել <<մշակույթ>> բառով ու դրա հոլովաձևերով>>:

~~**Հոդված 3**~~***Հոդված* 4**. Օրենքի 1-ին հոդվածի *1-ին մասի* 2-րդ պարբերության <<էկոլոգիական կուլտուրայի արմատավորմանը, բնապահպանության և բնօգտագործման>> բառերը փոխարինել <<էկոլոգիական մշակույթի արմատավորմանը, բնապահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության>> բառերով, իսկ <<անձին և>> բառերը փոխարինել <<~~անձին~~ *անձի*>> բառով, *իսկ <<նրանց>> բառը փոխարինել <<անձի>> բառով*:

~~**Հոդված 4**~~ ***Հոդված 5***. Օրենքի 3-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի <<բ>> կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<< բ) նպաստել էկոլոգիական դաստիարակության և մշակույթի ձևավորմանը, մարդու հասարակության ու շրջակա բնական միջավայրի փոխներգործությունների ներդաշնակեցմանը, էկոլոգիապես գրագետ անձի ~~սերնդի~~ ձևավորմանը.>>:

~~**Հոդված 5**~~ ***Հոդված 6*.** Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ ~~<<զ>>~~ <<է>>, <<ը>> , <<թ>> և *<<ժ>>* կետերով.

<<~~զ~~ *է*) էկոլոգիական կրթության և դաստիարակության բնագավառում նորարարական գիտական գործունեության խրախուսումը.

~~է~~ *ը) էկոլոգիական կրթության և դաստիարակության բնագավառում* սովորողների, մանկավարժների, ինչպես նաև պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվական միջոցների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության խրախուսումը.

~~ը~~ *թ*) էկոլոգիական կրթության ընդլայնումը կայուն զարգացման այլ ոլորտների՝ տնտեսական, սոցիալական և մշակութային փոխկապակցված հիմնախնդիրների ներառմամբ.

~~թ~~ *ժ*) էկոլոգիական կրթության որակի շարունակական բարելավումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:>>:

:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

№	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	ՀՀ ԱԺ պատգամավոր Ռ. Մուրադյան	Նախագծի 3-րդ հոդված	«անձին» բառը փոխարինել «անձի» բառով և գործող օրենքի նույն պարբերության մեջ «նրանց» բառը փոխարինել «անձի» բառով:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
2	ՀՀ ԱԺ պատգամավոր Ռ. Մուրադյան	Նախագծի 4-րդ հոդվածի «բ» կետ	հանել «սերնդի» բառը:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
3	ՀՀ ԱԺ պատգամավոր Ռ. Մուրադյան	Նախագծի 5-րդ հոդված	ներկայացված սկզբունքների կետերի հաջորդականությունը ուղղել, քանի որ տեխնիկական պատճառներով դրանք այբբենական կարգով չեն շարու-	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:

			նակում Օրենքում ամրագրված կետերը:		
4	ՀՀ ԱԺ պատգամավոր Ռ. Մուրադյան	Նախագծի 5-րդ հոդվածի «է» կետ	ավելացնել «էկոլոգիական կրթության և դաստիարակության բնագավառում» բառակապակցությունը:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
5	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	«գրագիտություն» բառը փոխարինել «մշակույթ» բառով, հաշվի առնելով, որ «կուլտուրա» բառի հոմանիշը մշակույթն է, և բացի այդ, «էկոլոգիական մշակույթ» հասկացությունն օրենքով սահմանված է:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
6	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	«2-րդ պարբերության» բառերից առաջ լրացնել «1-ին մասի» բառերը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները, իսկ «անձին» բառը փոխարինել «անձի» բառով:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
7	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	ճշտել լրացվող կետերի հաջորդականությունը, քանի որ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում «զ»	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

			կետ արդեն իսկ առկա է:	փոփոխություն	
8	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Օրենքի հոդվածներում փոփոխությունների հաջորդականությունն ապահովելու համար նախագծի 6-րդ հոդվածի դրույթները նախատեսել նախագծի 3-րդ հոդվածից առաջ:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
9	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	«Օրենքի 1-ին հոդվածի» բառերը փոխարինել «Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի» բառերով, իսկ «5-րդ հոդվածի 1-ին պարբերությունում» բառերը՝ «5-րդ հոդվածի 1-ին մասում» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է: